## Արձանագրության 3

**Երևան քաղաքում ինքնակամ կառույցների քանդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

10.01.2018թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. ԵՔ-ԲՄԾՁԲ-18/15 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՍԵՆ-ԼԵՎ» ՍՊԸ -ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքում ինքնակամ կառույցների քանդման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Տ. Իգիթյան

Անդամներ՝ ..... Ե. Կարապետյան

..... Ա. Կիրակոսյան

..... Կ. Հարությունյան

..... Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան